ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱՄԱՐԱՍԻ ՀՈՎՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հ. Մ. ԲԻԴԼԱՐՅԱՆ

Մատենագրական տվյալների համաձայն՝ Ամարասի վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ բնակավայրը գոյություն է ունեցել նրանից առաջ[1]։ Ամարասը մշակութային մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի արցախյան հատվածի կյանքում։ Հայտնի է, որ Մ. Մաշտոցը գրերի գյուտից հետո դպրոցներ է հիմնել նաև Արցախում[2]։ Ամարասի վանքը իր բազմադարյան պատմության ընթացքում քանիցս ենթարկվել է դրսեկ ավարառուների ավերածություններին։ Վերակառուցումների ու վերանորոգումների ընթացքում նրա վիմական արձանագրությունները համարյա լրիվ կորել են և, հավանաբար, միայն պեղումները կարող են նոր տեղեկություններ ավելացնել եղածին։ Մշակութային նշանավոր կենտրոն Ամարասը շրջակայքի բարեբեր հովտի միակ բնակավայրը չէր. նրան շրջակա բնակավայրերի հարուստ մշակույթի, կենցաղի ու սովորույթների մասին շատ բան են ասում այն բազմաթիվ առարկաները, որոնք հայտնաբերվում են դաշտային աշխատանքների ժամանակ։ Մեր խոսքը հիմնականում այդ առարկաների մասին է։

1965 թ. աշնանը Մարտունու շրջանի Ճարտար գյուղի Ալիբալի տեղամասում տնկահերկ կատարելու ժամանակ բացվել է բավական ընդարձակ (շուրջ 160 հեկտար) մի հին բնակավայր, որը համարվել է Ամարաս գյուղաքաղաքի մնացորդը[3]։ Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դիտումները, այս հնավայրը Ամարասի հարևանությամբ գոյություն ունեցող միջնադարյան խոշոր բնակավայր է եղել։ Այդ տեղամասից հայտնաբերված ավելի քան 250 ցուցանմուշ պահվում է Ղարաբաղի պատմաերկրագիտական թանգարանում։ Նշված բնակավայրում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ամբողջական և ջարդված խեցեղեն անոթներ (նկ. 1), թրծած աղյուսով շարված ամբողջական պատեր, երկաթյա գեղարդներ, դանակներ, կավե ձևումներ, քամիչներ, ձիթաճրագներ, սափորներ, պնակներ, օձի գլխով ապակյա ապարանջան և այլ նյութեր։ Բազմաթիվ կավանոթների նստուկների վրա կան դրանք պատրաստող վարպետների դրոշմները։ Ալիբալիում ավերված վիճակում գտնվել են խեցեղեն ամանների թրծման հնոց, ինչպես նաև մեծ քանակությամբ ջնարակած խեցենմուշներ (նկ. 2), հսկա կարասներ, քարե սանդեր, աղորիքներ և այլ նյութեր։ Ինչ վերաբերում է Ամարաս գյուղաքաղաքի ավերակներին, ապա դրանք հայտնի են մեր պատմաբան-ուսումնասիրողներին։ Մ. Բարխուդարյանը Ամարաս գյուղաքաղաքի ավերակները տեղադրում է համանուն վանքի հարավային կողմում[4]։ Ըստ երևույթին, նա նկատի է առել

---

1 Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1947, էջ 94։ «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 259—260։

2 Հմմտ. Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 152։

3 «Կոմունիստ». 24. I. 1967։

4 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 715։

այդ մասում գտնվող գերեզմանատունը, որտեղ մինչև հիմա էլ նշմարվում են հին գերեզմանաքարեր։ Ամարաս գյուղաքաղաքը ավելի ընդարձակ է եղել։ Այդ հնավայրը, որի հետքերը այսօր էլ կան, ընկած է վանքի մոտով հոսող գետի երկու ափերին։ Հնավայրի աջ ու ձախ կողմերում տարածվում են գերեզմանատներ, որոնցից մեկը գտնվում է Կնոլ կոչվող տեղամասում, իսկ մյուսը՝ Կզնապատ բլրի վրա։

Նկ. 1. Կավանոթների բեկորներ։

Նկ. 2. Ջնարակած ափսեների բեկորներ։

Ամարաս հնավայրից պատահականորեն գտնվել են շատ իրեր։ Այսպես՝ Լուսավորչի սարի լանջից գտնվել են պղնձե ամաններ, որոնցից մեկը ունի հետևյալ արձանագրությունը՝ «Անանեայ որդի Մանայսեի», մյուսը՝ «Ծատուրի որդի Եղիեայ»։ Հայտնի է, որ պղնձագործությունը պատմական Արցախում

զարդացած էր տակավին մ. թ. ա. երրորդ հազարամյակում։ Առաջածորի. Խոջալվի, Դոլանլարի, Ամարասի, Մեհմանայի. Կրկժանի բրոնզեդարյան դամբարանները տվել են պղնձե և բրոնզե ճարտարարվեստ շինվածքներ, որոնք ցույց են տալիս, որ Ղարաբաղում տարածված է եղել մետաղաձուլության արհեստը։

Ամարասում գտնված վիմագիր արձանագրություններից ամենահինը թվագրվում է՝ ՅՀԴ (925)։ Այստեղ գտնված խաչքարի մի բեկորի վրա պահպանվել է ութ կիսատ տողերով արձանագրություն (նկ. 3)։ Բարեբախտաբար ընթեռնելի են արձանագրության թվակիր տառերը։ Ստորև տալիս ենք այդ արձանագրության ընթերցվող մասի ընդօրինակությունը, հետագա քննությունը թողնելով վիմագրագետներին։

Նկ. 3. Խաչքարի մի բեկոր եղծված արձանագրությամբ։

... ՔԻ	... ՄԱՅՐ(Ի)	ՅՀԴ
... ՈՐԱ	[Ո]ՐԴՈՅ ԻՄ	
... ԻՇԵՍ	... ՈՅ ՃՈՐ	
... ԵՔԻՍ ԵՔ	... ՄԱՄԵՌ ԵՒ ԱԻՏԱՐԱ...	

Ամարասում գտնված երկրորդ խաչքարը միջնադարյան քարգործության լավագույն օրինակ է, քանդակված 1091 թ. վարպետ Ղազարի ձեռքով (նկ.4)։ Արժեքավոր է խաչքարի հետևյալ արձանագրությունը.

Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱ[Յ]ՈՅ ,Շ Խ։ ԷՐ
ԵՍ ԱԲՐԷՀԱՄ ԵՐԷՑ ԿԱՆԳ
ԵՅԻ։ ԶԻՍ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ։
ԵՍ ՂԱԶԱՐ ԿԱԶՄԵՑԻ։ ԶԻՍ ՅՇԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈՍ) Ի Յ(ԻՍՈՒՍ) Ի ՏՐ

Մինչև այժմ ամարասցի վարպետ Ղազարի անունը անհայտ էր։ Սույն արձանագրությամբ միջնադարյան քարգործ վարպետների ցուցակը հարըստացավ ևս մեկ անունով։ Խաչքարն ունի նաև գեղեցիկ զարդաքանդակ պատվանդան։

Նկ. 4. Ղազար քարգործի խաչքարը։

Շատ են Ամարասի հովտի հնությունները։ Հետագայում ավերված գյուղերից մի քանիսը ուղղակի դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից։ Մեր կազմած տեղանունների ցուցակում այստեղ կան միջնադարյան 4 նշանավոր գյուղեր։ Դրանցից մեկը՝ Դարահոջը, որը հիշատակվում է նաև Մ. Կաղանկատվացու մոտ[5], գտնվում է այժմյան Քարահունջ գյուղից 2 կմ դեպի արևմուտք, Ռսկահան սարի լանջին և կոչվում է «Քյոհնա Քարահունջեն յալ»։ Գյուղի ավերակների մի մասը այժմ հերկվում է, իսկ դաշտի վերևի մասում

5 Մովսես Կաղանկատվացի, Աղվանից աշխարհի պատմություն, Երևան, 1969, էջ 49, 51, 65։

պարզ երևում են ավերակների հետքերը։ Մի փոքրիկ հեղեղատ գյուղը բաժանում է դերեզմանատնից, որի խաչքարերը քանդակված են անմշակ քարերի վրա։ Հին Քարահունջի մոտ գտնվող սարի գլխին գոյություն ունի նշանավոր սրբավայր։

Հին Քարահունջը չպետք է շփոթել մեկ ուրիշ գյուղի՝ Քարավենի հետ, որի հնավայրը գտնվում է հին Քարահունջից դեպի արևելք, այժմյան Քերթ գյուղի մոտ, Ռսկահան սարի լանջին։ 1971 թ. ճանապարհաշինության ժամանակ բուլդոզերը դեմ է առել քար ու կրով կառուցված գետնաթաղ շենքի, այնուհետև գյուղացիները ամբողջովին ավերել են այն և քարերը տարել Քերթ։ Տարված մեծ բարերից մի քանիսը պահվում են գյուղի գերեզմանատան մոտ։

Այսպիսով, Դարահոջի և Քարավենի հնավայրերը տեղադրվում են Ամարասից 3—4 կմ հեռավորության վրա։ Մյուս գյուղը, որ նույնպես չի նշված Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում, Բրիտիսն է (գտնվում է Կոլխոզաշեն և Մամնա գյուղերի միջև)։ Այս անունով հին գյուղը այժմ կոչվում է Պերետես։ Պահպանվում է գյուղի ընդարձակ գերեզմանատունը՝ փլված մատուռով, իսկ գյուղատեղը ամբողջովին հերկվում է, բացի մի քանի արհեստական թմբերից, որոնք փլված տներ են, ծածկված հող ու մացառով։ Այս գյուղի անունը հիշատակում է Առաքել Դավրիժեցին, երբ նշում է Շահ-Աբասի մոտ գնացած մարդկանց անունները. «Օղլան Քեշիշն և իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ, Ջալալ բէկն իւր եղբօր որդւոքն ի Խաչենայ, Մէլիք Սուջումն ի Դեղակայ, Մէլիք Փաշիկն ի Քօչիղ գեղջէ, Մէլիք Բաբէն ի Բրիտիս գեղջէ»[6]։ Նշված տեղանունները, բացի Բրիտիսից, հայտնի են պատմությանը։

Պատմագիտության մեջ վաղուց արդեն ստեղծվել է այն կարծիքը, թե Քոչիզը այժմյան Ծովատեղն է։ Այս գյուղի հետքերը տեսանելի են Ծովատեղ և Խերխան գյուղերից ներքև ընկած դաշտում։ Ըստ երևույթին, գյուղը ունեցել է երկու գերեզմանատուն։ Դրանցից մեկը Մելիք-Փաշայաններինն է, հին գյուղի աշ կողմի բլրի վրա, որի մոտ այժմ ծավալված է Ծովատեղը, իսկ մյուս գերեզմանատունը սկսվում է անմիջապես գյուղի (Քոչիզի) սահմանագլխից և տարածվում մոտակա բլրալանջի վրա։ Ծովատեղ և Խերխան գյուղերը Քոչիզից ավելի բարձր են։

Այժմ Մելիք-Փաշայանների դամբարանատունը բոլորովին ավերակ է։ Միայն մատուռի արևելյան պատի մեջ մնում են երկու արձանագրված խաչքարեր, որոնց ընդօրինակումը ժամանակին կատարել է Մ. Բարխուդարյանը[7]։ Քոչիզի մյուս գերեզմանատան քարերը կիսով չափ թաղված են հողի մեջ։

Ամարասի հովտի միջնադարյան գյուղերից է հին Հերհերը, որի ավերակները գտնվում են Սոս գյուղից դեպի արևելք, Լուսավորչի սարի փեշին։

Ամարասից դեպի ձախ, Լուսավորչի բարձր սարի գլխին կա մի հին կիսավեր մատուռ, դրանից վերև, դեպի հյուսիս՝ Եղիշեի կանգուն վանքն է (Ղշավանքը), վերակառուցված XVI դ. վարպետ Գաբրիելի ձեռքով[8], ավելի բարձր Գիշ բերդն է իր ավերված պարսպի հետքերով։

Ամարասի հովտի աջ թևի լեռնապարի ամենաբարձր մասում գտնվում են երկու վանքեր. առաջինը Մավասի (Մամասի) ամրոց-վանքն է։ Մավա-

6 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 16։
7 Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 106—107։
8 Նույն տեղում, էջ 117։

սից շուրջ 3 կմ հեռավորությամբ, նույն լեռնաճյուղի հյուսիս-արևելյան բարձրավանդակի վրա, Մամնա գյուղից վեր, Շոշկա վանքն է, որի ներսում կան բազմաթիվ քանդակազարդ, արձանագրված խաչքարեր։ Ամարասի ընդարձակ հովիտը եզերող լեռնաճյուղերը հյուսիսային ծայրակետում օղակվում են բոլորովին առանձնացած մի սարով (Սորփա խութ), որի մոտ է Ղտվախան գյուղը։ Այդ սարի գլխին կա հին, բայց ավերված մի մատուռ։

Ամարասում բրոնզեդարյան դերեզմանաթմբերի հարևանությամբ կան նաև քարարկղային և կարասային թաղումներ։ Վերջիններս մեծ մասամբ հանդիպում են Սոս—Մանկալաշեն ճանապարհի հատվածում։ Տարբեր գարաշրջանի այդ հնություններից մի քանիսը հողային աշխատանքների ժամանակ բացվել են Մանկալաշեն, Սոս, Քերբ, Հերհեր, Նովատեղ գյուղերի մոտ։ Ուշագրավ են Նովատեղ գյուղի Փիլին-փոս տեղամասում գտնված բրոնզե ճարտարարվեստ իրերը։ Դրանցից բրոնզե թասը, մատանիները, ականջողերը, ապարանջանը և սև փայլով գավերը այսօր արդեն թանգարանային լավագույն ցուցանմուշներ են։

ПАМЯТНИКИ АМАРАССКОЙ ДОЛИНЫ

Г. М. БЕГЛАРЯН

Резюме

Амарас — древнейший населенный пункт на территории Арцаха, политический и духовный центр, сыгравший важную роль в истории северо-восточных областей древней и средневековой Армении.

Источниковедческие сведения, многочисленные памятники материальной культуры, а также разнообразные материалы, обнаруженные на обширной территории Амарасской долины во время полевых работ (в большей части они хранятся в Степанакертском краеведческом музее), говорят в пользу вышесказанного.

Эти материалы не могут не заинтересовать исследователей археологов и историков.